

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆԻՍ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևաքուղքը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաքուղքը: Պատասխանների ճևաքուղքի ճիշտ լրացումից է կախված Զեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Սնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) մուկորը խմորասունկ է
- 2) խմորասնկերը միաբջիջ են
- 3) դրոժը և պենիցիլը քորբոսասնկեր են
- 4) սնկերը իրենց մարմնում կուտակում են զլյուկագոն ածխաջուրը

2 Ո՞ր հիվանդության հարուցիչը չի պատկանում այրոկարիոտներին.

- 1) ժանտախտի
- 2) բրուցելյողի
- 3) անգինայի
- 4) էնցեֆալիտի

3 Ո՞ր բույսի տերևներն են աղեղնաջիղ.

- 1) եղիպտացորենի
- 2) հովտաշուշանի
- 3) ազռավաշքի
- 4) զարու

4 Բերանային ապարատի ո՞ր տիպն է բնորոշ փայտոջիլին.

- 1) կրծող-ձծող
- 2) կրծող
- 3) ծակող-ձծող
- 4) լիզող

5 Քանի՞ սրբանային ող ունի զորտը.

- 1)
- 2)
- 3)
- 4)

6 Թոփքի ժամանակ քոչունների ո՞ր մկաններն են իջեցնում թևերը.

- 1) փոքր ենթանրակային
- 2) ենթանրակային և միջկողային
- 3) կրծքային մեծ
- 4) միջկողային

7

Ո՞ր կենդանու սրտի փորոքից են դուրս գալիս թռային զարկերակը և առտայի աջ ու ձախ աղեղները.

- 1) ճագարի
- 2) մողեսի
- 3) նշտարիկի
- 4) արագիլի

8

Մարդու օրգանիզմում ի՞նչն է կազմված ծածկութային (էպիթելային) հյուսվածքից.

- 1) սրտապարկը
- 2) վեգը
- 3) վահանաճառը
- 4) մազը

9

Մարդու մաշկի ո՞ր շերտում են գտնվում քրտնազեղձերը և ճարպագեղձերը.

- 1) մելանին սինթեզող մահացած բջիջների շերտում
- 2) վերնամաշկում
- 3) ենթամաշկային բջջանքում և էպիթերմիսում
- 4) բուն մաշկում

10

Մարդու ողնուղեղի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) գտնվում է ողնուղեղային խողովակում
- 2) ստորին սահմանը երրորդ սրբանային ողն է
- 3) վերին սահմանը երկրորդ պարանոցային ողն է
- 4) գորշ նյութի լայնակի կտրվածքի վրա տարբերում են եղջյուրներ

11

Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին A - ի վերաբերյալ.

- 1) ջրալույծ է, ավիտամինողի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 2) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինողի դեպքում խթանվում է ռոդոպսինի սինթեզը
- 3) թերվիտամինողի կամ ավիտամինողի դեպքում զարգանում է թերի-թերի հիվանդությունը, ջրալույծ է
- 4) թերվիտամինողի կամ ավիտամինողի դեպքում կարող են զարգանալ մաշկի կամ լորձաթաղանթների խոցեր, ճարպալույծ է

12

Ի՞նչը չի մասնակցում մարդու լսողության իրականացմանը.

- 1) ձվաճ (օվալաճ) պատուհանի թաղանթը
- 2) արտաքին լսողական անցուղին
- 3) կիսաբոլոր խողովակը
- 4) կորտյան օրգանը

13

Ի՞նչ հիվանդություն է առաջանում մարդու վահանաճն զեղճի զերգործառույթի հետևանքով.

- 1) գաճաճություն
- 2) լորձայտուց
- 3) բազենովյան
- 4) բրոնզախտ

14

Ինչե՞րի առկայությամբ է պայմանավորված մարդու հումորալ ինունիտետը.

- 1) հորմոնների
- 2) ֆերմենտների
- 3) վիտամինների
- 4) հակամարմինների

15

Ի՞նչ է մարդու թոքամզային խոռոչը.

- 1) թոքերի մակերևույթի և թոքային թոքամզային թաղանթի միջև ձևավորվող օղով լցված տարածությունն է, որը պատված է հարթ էպիթելիով
- 2) կրծքավանդակի ներքին խոռոչն է, որում գտնվում են բրոնխները, թոքերը, սիրտը
- 3) թոքային թոքամզային թաղանթի և մերձպատային (առպատային) թոքամզային թաղանթի միջև ձևավորվող տարածությունն է, որը լցված է քիչ քանակությամբ հեղուկով
- 4) կրծքավանդակի և մերձպատային (առպատային) թոքամզային թաղանթի միջև ձևավորվող դատարկ տարածությունն է

16

Ո՞րն է պոլիմեր.

- 1) մեթիոնինը
- 2) մանանը
- 3) էրիթրոզը
- 4) քսիլոզը

17

Ո՞ր դեպքում է ճիշտ նշված ԴՆԹ-ի կազմում գտնվող նույնականացներից մեկի կազմությունը.

- 1) աղենին - ոիբող - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 2) ուրացիլ - դեօքսիոիբող - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 3) գուանին - ոիբող - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 4) թիմին - դեօքսիոիբող - ֆոսֆորական թթվի մնացորդ

18

Կորիզավոր բջջում որտե՞ղ է սինթեզվում ԱԵՖ-ը.

- 1) միտոքոնյալիումում և քլորոպլաստում
- 2) բջջակորիզում
- 3) ոիբոսումներում
- 4) Գոլջիի ապարատում և բջջային կենտրոնում

19

Ի՞նչ գործառույթ է իրականացնում Գոլջիի ապարատը.

- 1) ոիբոսումների և ածխաջրերի սինթեզ
- 2) լիզոսումների և պերօքսիստումների առաջացում
- 3) լիպիդների և ոիբոսումների ենթամիավորների առաջացում
- 4) ԱԵՖ-ի և պոլիպեպտիդային շղթայի սինթեզ

20

Որտե՞ղ են առաջանում կորիզակները.

- 1) բջջային կենտրոնում և Գոլջիի ապարատի հարթ թաղանթների ցանցում
- 2) քրոմոսոմի ո-ՌՆԹ-ի կառուցվածքը գաղտնագրող հատվածների շուրջը
- 3) կորիզաքաղանքի ներքին և արտաքին թաղանթներում
- 4) հարթ էնրազուազմային ցանցի բջջային թաղանթների վրա

21

Ի՞նչն է կատարում մատրիցայի դեր սպիտակուցի կենսասինթեզի դեպքում.

- 1) ԴՆԹ-ի մոլեկուլը
- 2) ոիբոսումը, կորիզը
- 3) ԴՆԹ-ի մոլեկուլի շղթաներից մեկը, փ-ՌՆԹ-ն, ո-ՌՆԹ-ի մոլեկուլը
- 4) ի-ՌՆԹ-ի մոլեկուլը

22

Ինչե՞րն են առաջանում սերմնաբանների աճման գոտում.

- 1) երկրորդ կարգի սպերմատոցիտները
- 2) սպերմատիդները
- 3) սպերմատոզօնիումները
- 4) առաջին կարգի սպերմատոցիտները

23

Ո՞ր պնդումն է ճիշտ նշտարիկի երկշերտ սաղմի առաջացման վերաբերյալ.

- 1) վեգետատիվ քևեռի բջիջները սողում են դեպի անիմալ քևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են էնտոդերմը
- 2) անիմալ քևեռի բջիջները սողում են դեպի վեգետատիվ քևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են երկշերտ սաղմը
- 3) երկշերտ սաղմն առաջանում է բլաստուլի պատի ներփրումով բլաստուլի խոռոչի մեջ
- 4) սաղմնային սկավառակը ճեղքվում է երկու թերթիկի. արտաքին՝ էնտոդերմի և ներքին՝ էնտոդերմի

24

Ո՞ր կենդանիներին է բնորոշ հետսաղմնային անուղղակի զարգացումը.

- 1) սարդերին
- 2) սողուններին
- 3) տզրուկներին
- 4) գորտերին

25

Գ. Մենդելի ծևակերպած ո՞ր օրենքն է պնդում, որ գամետների առաջացման ժամանակ դրանցից յուրաքանչյուրի մեջ ընկնում է ժառանգական գույզ գործոններից տվյալ հատկանիշին համապատասխանող միայն մեկ գործոն.

- 1) ճեղքավորման օրենքը
- 2) միակերպության օրենքը
- 3) գամետների մաքրության օրենքը
- 4) հատկանիշների անկախ բաշխման օրենքը

26

Ո՞ր գեներն են կոչվում շղթայակցված.

- 1) մեկ բջիջի առևտուումների տարրեր զույգերում գտնվող գեները
- 2) սեռական քրոմոսոմների նույն լոկուսներում գտնվող գեները
- 3) մեկ քրոմոսոմում գտնվող գեները
- 4) հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում գտնվող գեները

27

Որքա՞ն կլինի հետերոզիզուտ օրգանիզմների տոկոսային բաժինը ըստ տվյալ հատկանիշի հետերոզիզուտ և հոմոզիզուտ առանձնյակների միահիբրիդ խաչասերման արդյունքում առաջացած սերնդում.

- 1) 100%
- 2) 50%
- 3) 25%
- 4) 0%

28

Ինչի՞ հետ է կապված ցիտոպլազմային ժառանգականությունը.

- 1) բույսերի սոմատիկ բջիջների կորիզային ԴՆԹ-ի ժառանգման հետ
- 2) կենդանիների սեռական բջիջների կորիզային ԴՆԹ-ի ժառանգման հետ
- 3) միտոքոնոֆրիումների և քլորոպլաստների ԴՆԹ-ի ժառանգման հետ
- 4) բույսերի սոմատիկ և սեռական բջիջների ոփրոսումների և լիզոսումների ԴՆԹ-ի ժառանգման հետ

29

Ի՞նչ է ռեակցիայի նորման.

- 1) տվյալ գենի որոշակի հատվածի նուկլեոտիդների փոփոխության չափը
- 2) տարվա ընթացքում զերմաստիճանի փոփոխության սահմանները
- 3) հատկանիշի մուտացիոն փոփոխականության սահմանները
- 4) հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմանները

30

Մարդու ո՞ր իիվանդության պատճառն է առևտոսումներում գտնվող մուտանտ դոմինանտ գենը.

- 1) «մլավոցի սինդրոմ»
- 2) ֆենիլկետոնուրիայի
- 3) Մարֆանի սինդրոմի
- 4) Քլայնֆելտերի սինդրոմի

31

Ո՞ր նյութն է կենսածին.

- 1) օվկիանոսի ջուրը
- 2) քարածուխը
- 3) երկնաքարը
- 4) հողը

32

Ո՞ր շարքում նշված օրգաններն են հոմոլոգ.

- 1) բռչունների և միջատների թևերը
- 2) խլուրդի և իշախառանչ արջուկի փորող վերջույթները
- 3) ձկների և խեցքետինների խոիկները
- 4) պտերի և սնդրուկի կոճղարմատները

33

Նշված բույսերից ո՞րը մակաբույծ չէ.

- 1) ռաֆլեզիան
- 2) զաղձը
- 3) սարացենիան
- 4) օմելան

34

Ի՞նչն է ընկած տեսակի գենետիկական չափանիշի հիմքում.

- 1) տեսակի զբաղեցրած արեալը
- 2) տեսակների կարիոտիպերի տարբերությունները
- 3) սպիտակուցների և նուկլեինաքրուների կառուցվածքն ու կազմը
- 4) առանձնյակների ներքին և արտաքին կառուցվածքի նմանությունները

35

Ո՞ր օրգանիզմներին է բնորոշ սննդառության հետերոտրոֆ եղանակը.

- 1) ամոնիֆիկացնող բակտերիաներին
- 2) նիտրիֆիկացնող բակտերիաներին
- 3) երկարաբակտերիաներին
- 4) ծծմբաբակտերիաներին

36

Նշված էվոլյուցիոն փոփոխություններից ո՞րն է արոմորֆոզ.

- 1) կենդանիների օրգանիզմում քորդայի առաջացումը
- 2) միջատների բերանային ապարատի ձևափոխությունները
- 3) մերձհատակյա կենսակերպ վարող ձկների մարմնի տափակությունը
- 4) թրթուրների հովանավորող գունավորման առաջացումը

(37-38) Զափահաս մարդու մարմնի զանգվածը 80 կգ է, իսկ արյան խտությունը՝ 1,06 գ/մլ:

37

Մոտավորապես քանի՞ լիտր արյուն ունի այդ մարդը.

- 1) 3,71 - 4,45
- 2) 3,3 - 3,96
- 3) 4,62 - 5,19
- 4) 5,28 - 6,04

38

Հաշվել ձևավոր տարրերի զանգվածը (կգ).

- 1) 2,24 - 2,88
- 2) 1,96 - 2,52
- 3) 2,8 - 3,52
- 4) 2,38 - 3,06

39

Սպիտակուցի մոլեկուլային զանգվածը 30120 գ.ա.մ. (զանգվածի ատոմական միավոր) է: Ամինաքրուների միջին մոլեկուլային զանգվածը 120 գ.ա.մ. է: Ինչքա՞ն ժամանակում (վրկ) բջջում կսինթեզվի տվյալ սպիտակուցը, եթե մեկ ամինաքրվի միացումը տևում է 0,2 վրկ:

- 1) 1255
- 2) 1250
- 3) 50,2
- 4) 50

40

Կմոց սեռական գեղձերում 300 սկզբնական սեռական բջիջներ (օվոզոնիումներ) արդեն տեղափոխվել են աճման գոտի: Որքա՞ն ձվաբջիջներ կարող են զարգանալ.

- 1) 150
- 2) 300
- 3) 600
- 4) 900

41

Գտնելով ուկրային ձկների գլխուղեղի բաժինների (նշված են աջ սյունակում) և նրանց բնորոշ առանձնահատկությունների, գործառույթների (նշված են ձախ սյունակում) համապատասխանությունը.

Առանձնահատկություն, գործառույթ

- A. դրւս են գալիս տեսողական նյարդերը
- B. դրւս են գալիս հոտառական նյարդերը
- C. դրւս են գալիս աչքը շարժող նյարդերը
- D. կարգավորում է շնչառությունը
- E. կարգավորում է արյան շրջանառությունը
- F. հավասարակշռության և շարժումների կարգավորման դեր է կատարում
- G. կարգավորում է մարսողությունը

Գլխուղեղի բաժին

- 1. առջևի ուղեղ
- 2. միջակա ուղեղ
- 3. միջին ուղեղ
- 4. ուղեղիկ
- 5. երկարավուն ուղեղ

42

Մարդու մկանների ո՞ր գործառույթները (նշված են ձախ սյունակում) ո՞ր մկաններին են (նշված են աջ սյունակում) համապատասխանում:

Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործառույթ

- A. մասնակցում են (է) ներշնչմանը
- B. մասնակցում են (է) գլխի աջ-ձախ թեքմանը
- C. մասնակցում են (է) արտաշնչմանը
- D. կծկվում են (է) թիակներն իրար մոտեցնելիս
- E. կծկվելիս բազուկն իջնում է և շարժվում հետ
- F. ձգում են (է) ազդրը դեպի հետ
- G. կծկվելիս իջեցնում են (է) գլուխը

Մկաններ

- 1. նստատեղի մկաններ
- 2. սեղանաձև մկան
- 3. արտաքին միջկողային մկաններ
- 4. կրծոսկրաանրակապտկաձև մկաններ
- 5. ներքին միջկողային մկաններ
- 6. մեջքի լայն մկան

43

Օրգանիզմի ո՞ր սեռին (նշված է ձախ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգանիզմի սեռը

Բնութագիր

- A. պոչավոր երկենցաղի իգական սեռը
- B. մարդու իգական սեռը
- C. թիթեղի արական սեռը
- D. թռչունի իգական սեռը
- E. դրոզոֆիլ պտղաճանճի արական սեռը
- F. մողեսի արական սեռը
- G. ծղրիդի իգական սեռը

- 1. հոմոգամետ
- 2. հետերօգամետ

44

Բաժանման ո՞ր պրոցեսը (նշված է ձախ սյունակում) քջի բաժանման ո՞ր ձևին և փուլին (նշված են աջ սյունակում) է համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Բաժանման պրոցես

Քջի բաժանման ձև և փուլ

- A. ցենտրիուլները տարամիտվում են դեպի տարրեր քևեռներ, սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, հոմոլոզ քրոմոսոմներն առանձին-առանձին են
- B. հապլոիդ թվով երկրրոմատիդային քրոմոսոմներն ապապարուրվում են
- C. տեղի է ունենում ցիտոպլազմայի բաժանում, ձևավորվում են դիպլոիդ քջիզներ
- D. հոմոլոզ քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային գոտում՝ դեմ դիմաց
- E. սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, տեղի է ունենում հոմոլոզ քրոմոսոմների կոնյուգացիա և տրամախաչում
- F. տեղի է ունենում քրոմատիդների տարամիտում

- 1. մեյօզի առաջին բաժանման թելոֆազ
- 2. մեյօզի առաջին բաժանման պրոֆազ
- 3. միտոզի պրոֆազ
- 4. մեյօզի առաջին բաժանման մետաֆազ
- 5. միտոզի թելոֆազ
- 6. մեյօզի երկրորդ բաժանման անաֆազ

45

Օրգանիզմների փոխհարաբերության ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) սիմբիոզի ո՞ր ձևին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում:
Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

Սիմբիոզի ձև

- | | |
|---|----------------|
| A. լոցման ձևները ստանում են սննդի մնացորդներ այն կենդանիներից, որոնց ուղեկցում են և միաժամանակ պաշտպանվում գիշատիչներից | 1. կոմենսալիզմ |
| B. փոխազդող տեսակներից միայն մեկն է ստանում օգուտ, իսկ մյուսն այդ փոխազդեցության հանդեպ անտարբեր է | 2. մուտուալիզմ |
| C. խոշոր ծառերի և դրանց հովանու տակ աճող լուսաւեր խոտաբույսերի փոխազդեցությունը | 3. կոռպերացիա |
| D. էպիֆիտ բույսերն օգտագործում են ծառաբույսերը որպես հենարան | 4. ամենսալիզմ |
| E. փոխազդեցությունը անհրաժեշտ պայման է երկու տեսակների համար, որի դեպքում երկուսն էլ օգուտ են ստանում | |
| F. փոխազդող տեսակները ստանում են օգուտ, սակայն դրանց համատեղ գոյությունը պարտադիր չէ | |
| G. խեցետինը բնակվում է փափկամարմնի դատարկ խեցու մեջ և իր հետ տանում է ակտինիային | |
| H. երկու տեսակներից մեկը տուժում է, իսկ մյուսի համար փոխազդեցությունն անտարբեր է | |

46

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում միջավայրի բարձր ջերմաստիճանի պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ջերմակարգավորման կենտրոնի դրդում
2. մաշկ մղվող արյան ծավալի ավելացում
3. արտաքին միջավայրի ջերմաստիճանի բարձրացում
4. քրտնարտադրության ուժեղացում
5. մաշկի արյունատար անոթների լայնացում
6. ջերմատվության ուժեղացում
7. մաշկի ջերմային լմկալիչների դրդում

47

Նշել Ի.Պ. Պավլովի փորձերում լույսի նկատմամբ թքազատության պայմանական ռեֆլեքսի առաջացման և իրականացման ճիշտ հաջորդականությունը.

1. թքազատություն
2. անտարբեր և ոչ պայմանական գրգռիչների զուգակցված ներգործության բազմակի կրկնություններ
3. թքազատության կենտրոնի դրդում
4. լուսային ազդակի ներգործություն
5. կեղևի սննդառական և տեսողական կենտրոնների միջև ժամանակավոր կապի առաջացում
6. լուսային ազդակի հետ զուգակցված կերակրում

48

Ի՞նչ հաջորդականությամբ են դասավորված մարդու մարտողական համակարգի բաժինները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ստանոքսի մարմին
2. վերելակ խթաղի
3. ստանոքսի հատակ
4. զստաղի
5. վայրիջակ խթաղի
6. տասներկումատնյա աղի
7. լայնակի խթաղի
8. կույր աղի

49

Նշել մարդու օրգանիզմում դեպի գլխուղեղի բջիջներ ճարպերի տեղափոխման հաջորդական ուղին՝ սկսած բարակ աղիներում ճարպերի քայլայման գործընթացից.

1. ավշային մազանոթներ
2. ձախ նախասիրտ
3. թոքային զարկերակ
4. գլիցերինի և ճարպաթրուների ներծծում
5. գլխուղեղի զարկերակ
6. թափիկների էպիթելի բջիջներում օրգանիզմին բնորոշ ճարպերի սինթեզ
7. առրտա
8. ստորին սիներակ
9. նեյրոններ

50

Ինչպիսի՞ն է կատարողական ընթացքում տեղի ունեցող պրոցեսների հաջորդականությունը.

1. մարտադաշտական վակուոլի առաջացում
2. միտոքոնոքիումում ԱԵՖ-ի առաջացում
3. բարդ օրգանական նյութերի ճեղքում
4. ֆազոցիտոզի միջոցով սննդային մասնիկի անցում բջիջ
5. պարզ շաքարի ճեղքում
6. սննդային մասնիկի միաձուլում լիզոսոմի հետ
7. պիրոխաղողաթթվի առաջացում

51

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի նշանակած գործնթացների հաջորդականությունը.

1. գլյուկոզի առաջացում
2. ջրի ֆոտոլիզ (քայլայում)
3. գրգռված էլեկտրոնի անցում փոխադրիչ մոլեկուլի վրա
4. քլորոֆիլի մոլեկուլի վերականգնում
5. ատոմային ջրածնի առաջացում
6. քլորոֆիլի մոլեկուլից էլեկտրոնի անջատում
7. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում

52

Ինչպիսի՞ն է պրոցեսների ճիշտ հաջորդականությունը՝ ռեցեսիվ մուտացիաների առաջացումից մինչև նրանց՝ ֆենոտիպում արտահայտվելը.

1. ըստ մուտանտ գենի՝ հոմոզիգոտ ձևի առաջացում
2. ռեցեսիվ մուտացիա կրող օրգանիզմում գամետների առաջացում
3. մուտացիայի արտահայտում ֆենոտիպում
4. ռեցեսիվ մուտացիայի տարածում
5. ռեցեսիվ մուտացիա կրող գամետների միաձուլում
6. նուկլեոտիդների մեկ գույզի փոխարինում
7. ռեցեսիվ մուտացիայի առաջացում

53

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. պարասիմպաթիկ նյարդերով հաղորդվող նյարդային ազդակները հանգեցնում են սրտի պսակաձև անորմների և ուղեղի անորմների լայնացնանը
2. վարոլյան կամքում տեղակայված են ակնազնիների և դիմախաղի մկանների շարժումները, ինչպես նաև շնչառությունը կարգավորող կենտրոնները
3. աչքի և հոտառության ընկալիչներից նյարդային ազդակներն ուղարկվում են ողնուղեղ, ապա ուղեղաբնով հասնում տեսաթմբի համապատասխան կենտրոններ
4. էրիթրոցիտներն ունեն երկգոգավոր ներփքված սկավառակների տեսք, քայքայվում են լյարդում և փայծաղում
5. արյան մակարդմանը նպաստում են կալցիումի իոնները, K վիտամինը, թրոմբինը
6. ստորին ազատ վերջույթների կմախքը կազմված է կոնքոսկրերից, ազդրոսկրերից, ոլոքներից և ոտնաթաթի ոսկորներից
7. վեգետատիվ նյարդային համակարգի նեյրոնների արտոնները միելինապատ են, և դրանցով նյարդային գրգիռը ավելի արագ է հաղորդվում, քան մարմնական նյարդաբելերով

54

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. լյարդի ծծանը փորային ծծանի միջոցով ամրանում է տիրոջ օրգաններին
2. միջատների ճարպային մարմնիկում կուտակվում են արյունից առանձնացված վճասակար նյութերը
3. բարենպաստ պայմաններում կանաչ էվգլենան բազմանում է անսեռ եղանակով՝ կիսվելով մարմնի լայնությամբ
4. թոշումների օդապարկերը մասնակցում են շնչառությանը, օրգանիզմից ջրի գոլորշիացմանը
5. երիդնան ճվարող է, ունի ընկերք, չունի կոյանոց, ճագերին կերակրում է կարով
6. էշերի, ձիերի անրակները լավ զարգացած են
7. օղակավոր որդերը եռաշերտ, ճառագայթային համաշափությամբ օժտված կենդանիներ են

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. շրջակա միջավայրում նատրիումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի բջիջներում, իսկ կալիումի իոնների պարունակությունը կենդանի բջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում
2. գենետիկական գաղտնագիրն օժտված է ավելցուկայնությամբ, քանի որ նույնականացնելու համար առաջարկվում է կողավորել 1 - 6 ամինաթթուների
3. կորիզավոր բջիջներում գլխողիզի արդյունքում առաջացած պիրոխաղողաթթուն քրվածնի բավարար քանակության պայմաններում անցնում է միտոքոնդրիումներ և ենթարկվում հետագա ճեղքման, որի արդյունքում առաջանում է ացետիլ-կոֆերմենտ A
4. բողոքմամբ են բազմանում հիդրաները և բարձրակարգ բույսերը
5. հատիկավոր էնդոպլազմային ցանցով հարուստ են մարդու ենթաստամոքսային գեղձի, բքագեղձերի բջիջները
6. ակտինը և միոզինը շարժողական սպիտակուցներ են, որոնք կազմավորում են մկանաթելիկներ և միմյանց հետ փոխազդելով, մեկը մյուսի մկատմամբ սահելով՝ ապահովում են մկանների կծկումը

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. փեղկավոր փականների եզրերից շարակցահյուսվածքային թելեր են ձգվում դեպի փորոքների պատերը
2. հարականջային բքագեղձերը արտադրում են սպիտակուցային բուք
3. ենթաստամոքսային գեղձի զլյուկազոն հորմոնն արյան զլյուկոզի հավելյալ քանակը դարձնում է զլիկոզեն
4. ենթաստամոքսային գեղձի պոչային հատվածը շրջապատված է տասներկումատնյա աղիով, իսկ զլյուկազոնը հարում է փայծաղին
5. դռներակով լյարդի մեջ է մտնում աղեստամոքսային ուղուց դուրս եկող երակային արյունը
6. արյան ճնշումը սիներակներում ավելի մեծ է, քան մազանոքներում

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. կենսողրտի սահմանները պայմանավորված են միջավայրի ոչ կենսածին գործոններով
2. Ի. Ընալիառությունը ցույց է տվել, որ չփոփոխվող գոյության պայմաններում բնական ընտրությունը և էվոլյուցիան դադարում են
3. մրցակցությունը, մուտուալիզմը, բնական ռադիոակտիվ ճառագայթումը էկոլոգիական կենսածին գործոններ են
4. արեգակնային ճառագայթման էներգիան, կենդանի նյութի կենսագործունեությունը կենսաբանական շրջապտույտի շարժիչ ուժերն են
5. խլուրդի և իշախառանչ արջուկի առջևի վերջույթների նմանությունը զուգահեռության օրինակ է
6. միկրոէվոլյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. օրգանիզմի բոլոր հատկանիշների ամբողջությունը կոչվում է ֆենոտիպ
2. կողոմինանսության դեպքում հետերոգիգոտ առանձնյակներում դրսնորվող հատկանիշն ալելային գույքի երկու գեների գործունեության հետևանք է
3. պլեյոտրոպիայի դեպքում տարբեր ոչ ալելային գեներ պայմանավորում են միևնույն հատկանիշի զարգացումը
4. ասիմետրիկ տրանսլոկացիայի դեպքում երկու քրոմոսոմների ցենտրոմեր չպարունակող հատվածները միանում են միմյանց
5. ալկարիումային գուապի ձկնիկի պոչալողակի գունավորումը X քրոմոսմի հետ շղթայակցված հատկանիշ է
6. երկինետերոգիգոտ առանձնյակների խաչասերման արդյունքում, գույգ ալելների ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում սերմում ստացվում են 9 գենոտիպային և 4 ֆենոտիպային խմբեր

(59-60) Ծագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով, ուղիղ մազերով տղամարդն ամուսնացավ երկնագույն աչքերով, արյան երրորդ խմբով, ալիքաձև մազերով կնոջ հետ: Այդ ընտանիքում ծնվեց երկնագույն աչքերով, արյան առաջին խմբով, ուղիղ մազերով երեխա: Ծագանակագույն աչքեր պայմանավորող գենն առտոսումային է և դոմինանտում է երկնագույն աչքեր պայմանավորող գենի նկատմամբ, ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունի գանգուր մազեր, մյուսը՝ ուղիղ: Նշված հատկանիշները պայմանավորող գենները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում:

59

Որոշել այդ ընտանիքում շագանակագույն աչքերով, արյան չորրորդ խմբով և ալիքաձև մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

Պատասխանը բազմապատկել 100-ով:

60

Զանի^o տեսակի գենոտիպով երեխաներ կարող են ծնվել տվյալ ընտանիքում:

61

Ֆուտոսինթեզի ժամանակ կլանվել է $10,08 \text{ m}^3 \text{ CO}_2$: Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (գրամ), եթե 1 մոլ գազը գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ:

(62-63) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման արդյունքում կուտակվել է 64 մոլ կաթնաթթու և պահեստավորվել է 52080 կԶ էներգիա: Ընդունել, որ 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաթթու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կԶ և ԱԵՖ-ի մինչև ԱԿՖ ճեղքման արդյունքում անջատվում է 30 կԶ/մոլ էներգիա:

62

Որքանո՞վ է թթվածնային փուլում էներգիայի կորուստը գերազանցում անթթվածին փուլում մինչև կաթնաթթվի առաջացումը էներգիայի կորստին:

63

Քանի՞ մոլ ջուր է առաջացել ամբողջ պրոցեսի ընթացքում:

(64-65) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածի երկարությունը $1,53 \cdot 10^{-6}$ մետր է: Ա+Ծ / Գ+Ց քանակական հարաբերությունը հավասար է 1,5-ի, իսկ մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նանոմետր է:

64

Գտնել աղենինային և քիմինային նուկլեոտիդների գումարը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում:

65

Հաշվել ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում ԴՆԹ-ի երկու շղթաների ազոտային հիմքերի միջև առաջացող ջրածնային կապերի թիվը:

- (66-68) Ծանր ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու քոքերում արյան մեջ դիֆուզվել է 691,2 լ թթվածին: Ընդունել, որ աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,5 անգամ, օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն աճել է 20 %-ով, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղված արյան ծավալը՝ 1,4 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում, շնչառական օդի ծավալը 600 մլ է, սրտի բոլորաշրջանի տևողությունը՝ 0,8 վրկ և մեկ կծկման ժամանակ փորոքն արտամղում է 65 մլ արյուն:

66

Քանի՞ րոպե է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

67

Աշխատանքի ընթացքում քանի՞ լիտր թթվածին է ստացել գլխուղեղը: Ընդունել, որ գլխուղեղը ստանում է մեծ շրջան մղված արյան ծավալի 25 %-ը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

68

Որոշել մեկ օրվա ընթացքում սրտից արտամղված արյան ծավալը:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. կոճռուկների փոսիկներում տեղակայված երիկամներից աջը փոքր-ինչ ավելի վերև է, քան ձախը
2. երկրորդային մեզը նեֆրոնի պատիճի պատով ոլորուն խողովակի մեջ ֆիլտրվող հեղուկն է
3. երիկամ են մտնում երկու խոշոր անոքներ՝ երիկամային զարկերակը և երիկամային երակը
4. երկրորդային մեզը երիկամի միջուկային շերտի բուրգերի խողովակներով լցում է երիկամի ավազան
5. նեֆրոնի ոլորուն (գալարուն) խողովակն իջնելով միջուկային շերտ՝ վերածվում է ծնկաձև խողովակի, որն այնտեղ միանում է բրգով անցնող մեզը հավաքող խողովակին
6. նեֆրոնի պատիճ մտնող առքերող զարկերակը ճյուղավորվում է մազանոքների, որոնք միանալով ձևավորում են արտատար զարկերակ

70

Ծածկասերմ բույսերի բեղմնավորման և սերմի զարգացման վերաբերյալ տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. կրկնակի բեղմնավորման արդյունքում սաղմնապարկից ձևավորվում է սերմը
2. առեջի փոշեհատիկում մեյզի արդյունքում առաջացող չորս հապլոիդ քջիջներից երեքը ոչնչանում են, իսկ մեկը վերածվում է մեզասպորի
3. փոշեհատիկն ընկնելով վարսանդի սպիրի վրա, ծլում է՝ առաջացնելով փոշեխողրվակ
4. վարսանդի սերմնարանում մեզասպորը երեք մեյզտիկ բաժանումներից հետո սկիզբ է տալիս ուր հապլոիդ կորիզներ պարունակող սաղմնապարկին
5. վեգետատիվ քջիջը կիսվում է միտոզով և առաջանում են երկու հապլոիդ հավաքակազմով սպերմիտումներ
6. միկրոսպորի մեյզոնով կիսման արդյունքում առաջանում են հապլոիդ հավաքակազմով վեգետատիվ և գեներատիվ քջիջները